

ժեցուն, կամ եթե ամբողջությամբ թարգմանել է, ապա մնացել է անտիպ»²²:

Անշուշտ, արժե առանձնակիորեն հիշատակել նաև Ղևոնդ Ալի-շանի վերաբերմունքը: Նա նույնպես բարձր կարծիք է հայտնել Դավրիժեցու մասին՝ շեշտելով, որ «թե՛ իրմէ առաջի երկու երեք դարուց պատմիչներէն և թե՛ իրմէ վերջնոց ամենէն լաւագոյնն է և **կ'արժէ օրինաւոր Պարմէաց դասակցել**» (ընդգծումը մերն է–Ա.Ն.)²³:

Առաքել Դավրիժեցուն ու նրա պատմագրքին վերաբերող մյուս տարաբնույթ անդրադարձները հանգամանորեն ներկայացրել է Լորենտա Դանեղյանն իր «Առաքել Դավրիժեցու երկը որպէս Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր» (1978) մենագրությունում՝ նկատի առնելով ոչ միայն իրեն անհրաժեշտ պատմագիտական արժեքի գնահատման հատույթը, այլև ընդհանրապես²⁴: Դանեղյանն իրավամբ նկատում է, որ «Թեև շատ հեղինակներ են անդրադարձել Դավրիժեցուն, սակայն քիչ են փորձերը՝ հանգամանորեն վերլուծելու նրա գործը, աշխարհայացքը և «Պատմության» հետ կապված շատ հարցեր»²⁵: Նաև այդ պատճառով դրանց այստեղ չենք անդրադառնում և կբավարարվենք միայն հղումով առ Լորենտա Դանեղյանի աշխատությունը, մանավանդ որ՝ այդ աշխատությանը մանրամասն ուսումնասիրման առումով շատ քիչ բան է հաջորդել²⁶, թեպետ իրար հետևից

²² Տե՛ս **Ռափայել Պատկանյան**, Երկերի ժողովածու, հատոր 6, Երևան, 1970, էջ 589, Քերովբե Պատկանյանին գրած 1874, մարտի 5 թվակիր նամակի 1-ին ծանոթագրությունը:

²³ **Ղևոնդ Ալիշան**, Հայապատում, մասն Ա, Վեներտիկ-Սուրբ Ղազար, 1901, էջ 131:

²⁴ **Լորենտա Դանեղյան**, Առաքել Դավրիժեցու երկը որպէս Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր, էջ 34–46:

²⁵ Նույն տեղում, էջ 37:

²⁶ Այս իմաստով խոսում է այն հանգամանքը, որ Սինաս Թեոլոյանի՝ 1986-ին հրատարակված «Ի՞նչ կ'ընէ Առաքել Դավրիժեցի՝ 17-րդ դարու պատմագրային իր վկայութեանց եւ հայ մշակութային- դաստիարակչական կեանքին սեւեռող ակնարկներուն մէջ» հոդվածում («Հայրենիք», օրաթերթ, Բոստոն, 1986, համար 90) որպէս Դավրիժեցու աշխատության մասին գրված ամենածավալուն ու